ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

—

ՔԱՋԲԵՐՈՒՆԻ

Այս տարի լրանում է մեր անդուլ գործիչներից մէկի՝ Քաջբերունու (բժ. Գաբրիէլ Յովհաննիսեան) գրականական գործունէութեան քառասնամեակը։

Քաջբերունին պատկանում է գրագէտների այն տիպին, որոնք հետաքրքրւում են աւելի գաղափարով, քան թէ արտաքին փայլով, գործով, բայց ոչ խօսքով, և այս պատճառով անընդհատ աշխատակցել է Հիւսիսափայլին, Մեղուին, Արարատին, Փորձին, Արձագանքին, Ազգ. Հանդիսին և այժմ Լումային։ Արդարութիւնը պահանջում է ասել սակայն, որ Մեղուին և Լումային աշխատակցելը արդելք չեղաւ, որ ներկայ Մշակի ղեկավարները խանգարէին յարգելի գործչի քառասնամեայ գործունէութեան գնահատութիւնը։ Այս հանդամանքը ինքն ըստ ինքեան ոչ միայն մի յայտնի յառաջադիմութեան նշան է, այլ և ապացոյց է, թէ որքան գնահատելի է և ծանրակշիռ մեր սիրելի բժշկի երկարամեայ գործունէութիւնը։

Այժմ մենք ձեռնհաս չենք տալու Քաջբերունու գրական բազմամեայ և արդիւնաւոր գործունէութեան ուսումնասիրութիւնը և նկարագիրը, բայց աւելորդ չենք համարում ասելու, որ նորա անդրանիկ գրուածքներից մէկն է նորա «Տէր Սարգիս» վերնագրով վէպը «Հիւսիսափայլում», որ սակայն, մինչև այժմ անաւարտ է մնացել. իսկ ապա գալիս են նորա ընդարձակ «Ճանապարհորդական նկատողութիւնները» յիշեալ լրագիրներում և ամսագիրներում, վերաբերեալ մեր երկրի պատմութեան, աշխարհագրութեան, բնագրութեան, ժողովրդագրութիւն և գործիչներին։

Շատ ուրախ ենք, որ մեր ժողովրդի մէջ յարգելի գործչի յօբելեանը տօնելու գիտակցութիւնը կայ և կարծում ենք, որ այդ տօնախմբութիւնը ամենից յարմար է կատարել առաջիկայ աշնանը։ Ցուսով ենք, որ նորա գործունէութեան համակրողները կձեռնարկեն Քաջբերունու բոլոր հեղինակութիւնների հրատարակութեան, որով շատ մեծ ծառայութիւն մատուցած կլինեն մեր գրականութեան։